



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

23.11.2022թ.

ՈՐՈՇՈՒՄ 846-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՐԻՍ ՔԱՂԱՔԻ
Մ.ՄԱՀՏՈՅԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 14/36 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0,00152 ՀԵԿՏԱՐ
ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆ ՌԻՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԱՐՄԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ կետով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, Հայաստանի Հանրապետության 2019 թվականի դեկտեմբերի 3-ի «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» թիվ 225-Ն օրենքով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի թիվ 550-Ն որոշումով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի բ/ ենթակետով, հիմք ընդունելով Գորիս համայնքի ավագանու 2022 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ 145-Ա որոշումը, և Գորիս քաղաքի բնակիչ Արմեն Ավետիսյանի 2022 թվականի հոկտեմբերի 19-ի դիմում-խնդրանքը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ՝

1. Գորիս համայնքի Գորիս քաղաքի Մ.Մաշտոցի փողոցի թիվ 14/35 հասցեում Արմեն Ավետիսյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասի ընդլայնման համար, հողատարածքին կից գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի բնակելի կառուցապատման գոտում գտնվող Գորիս համայնքի Գորիս քաղաքի Մաշտոցի փողոցի թիվ 14/36 հասցեի 0,00152հա (կադաստրային ծածկ. 09-003-0091-0025) հողատարածքը, որը հնարավոր չէ որպես առանձին գույքային միավոր օտարել հրապարակային սակարկության միջոցով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Արմեն Ավետիսյանին 67600 (վաթսուներեք հազար վեց հարյուր) ՀՀ դրամ շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքով:
2. Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործարարության իրականացումը:



ԱՌՈՒՇ ԱՌՈՒՇԱՆՅԱՆ